ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Հրազդանի Խ.Աբովյանի անվ. թիվ 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ստուգողական աշխատանքների , ստուգարքների և քննությունների նախապատրաստման , անցկացման և վերլուծության մեթոդաբանություն

Կատարող՝ Անահիտ Հունանյան

Առարկա՝ դասվար

Ուսումնական հաստատություն՝ Հրազդանի Վիլյամ Սարոյանի անվան թիվ *11* հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ.....4

ԳԼՈՒԽ 1

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ.....6

ԳԼՈՒԽ 2

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՈՒՄԸ.....9

ԳԼՈՒԽ 2.1

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԻՑ.....13

ԳԼՈՒԽ 3

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ.....20

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....22

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից մանկավարժությունը հակված է կրթության բովանդակությունը մեկնաբանելու որպես մանկավարժականացված սոցիալական փորձ, կամ սոցիալական փորձի մանկավարժական մոդել: Սա նշանակում է, որ կրթության բովանդակության մեջ պետք է արտացոլվի տվյալ հասարակության կուտակած մշակութային արժեքները, այնպես որ սովորողները ձեռք բերեն ոչ թե վերացական, կյանքից կտրված ինչ-որ գիտելիքներ ու կարողություններ, այլ կարողանան ներքնայնացնել առկա մշակութային արժեքներն ու ապրել դրանցով: Այսպիսով, մանկավարժական նոր մոտեցումները պահանջում են մի կողմից ձևավորել մարդուն անհրաժեշտ գիտելիքներ ու կարողություններ, մյուս կողմից մարդուն հասարակության լիարժեք անդամ դարձնելու համար զարգացնել այնպիսի որակներ, ինչպիսիք են քննադատական մտածողությունը, համագործակցային կարողությունները, ինքնուրույնությունը, հավակնությունների մակարդակը, ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու ու վճիռներ կայացնելու հմտությունները:

Այս խնդիրների լուծման մի միջոց է տուգողական աշխատանքների , ստուգարքների և քննությունների նախապատրաստումն , անցկացումն ու վերլուծությունը:

Հետազոտության նպատակն է ՝ բացահայտել ստուգողական աշխատանքների , ստուգարքների և քննությունների նախապատրաստման , անցկացման և վերլուծության գործընթացի էությունը, կիրառել և գրանցել արդյունքներ:

Հետազոտության խնդիրներն են՝ ուսումնասիրել թեմային առնչվող գիտամանկավարժական, գիտամեթոդական գրականությունը,

Վերահսկել սովորողների գիտելիքների կարողությունների և հմտությունների մակարդակը համապատասխան մեթոդների միջոցով,

Բարձրացնել ուսուցման մակարդակը,

Կիրառել մի շարք մեթոդներ նպատակին հասնելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Ամեն նոր օր աշխարհը մարդուն ներկայանում է նոր դեմքով, ամեն օր նոր իրավիճակ է ստեղծվում, որում իր գոյությունը պահպանելու, ստեղծված պրոբլեմները լուծելու համար յուրաքանչյուր անհատ պիտի իրադրությունը վերլուծելու, իմաստավորելու և համապատասխան վճիռներ կայացնելու կարողություններ ունենա: Կյանքը հասարակությանն ապրելու և գործելու նոր ռազմավարության է պարտադրում: Այդ նոր

ռազմավարության մշակումն էլ ամենաընդհանուր իմաստով կազմում է ժամանակակից կրթական քաղաքականության բովանդակությունը: Այս երևույթներն ամենայն խորությամբ դրսևորվում են զարգացած Արևմուտքի երկրներում: Սակայն ընթացող և օրըստօրե թափ առնող գլոբալացման գործընթացները տեղ չեն թողնում մտածելու, որ դրանք կատարվում են այլ աշխարհում և մենք անհանգստանալու հիմքեր չունենք: Մենք քայլ առ քայլ ներգրավվում ենք այդ գործընթացներում, ինչը պարտադրում է համաքայլ ընթանալ ընդհանուր զարգացումներին և երբեմն լուծել խնդիրներ, որոնք մեր ապագային են վերաբերում ավելի, քան ներկային: Ընթանում է կրթական համակարգերի այս կամ այն չափով դիմագրկման գործընթաց: Բայց, զարգացած երկրների փորձի, իրականացվող բարեփոխումների ուսումնասիրությունը պարզ ցույց է տալիս, որ ոչ մի երկիր կամավոր իրեն չի հանձնում համահարթեցման ու միասնացման այս անողոք տարերքին: Ցուրաքանչյուրն ուզում է իրեն տեսնել այդ միավորման մեջ, բայց, տեսնել որպես ինքնուրույն արժեք ունեցող, ամբողջին իր սեփական ներդրումը բերող և դրանով իսկ իր ինքնությամբ ներկայացող երկիր: Միայն այդպես, միայն սեփական դիմագիծը պահպանելով, մենք կարող ենք դառնալ միասնական կրթական տարածության լիարժեք անդամ:

Կրթության արդիականացման գործընթացը Հայաստանում մեկ տասնամյակի պատմություն ունի: Այս ընթացքում լուրջ փոփոխություններ են կատարվել հանրակրթական համակարգի կառուցվածքում, մշակվել է կրթության մասին օրենքը, ստեղծվել ու շարունակվում են ստեղծվել նոր կրթական ծրագրեր, ուսումնական պլաններ, դասագրքեր: Ձևավորվում է գիտելիքների ու կարողությունների գնահատման նոր համակարգ: Իրականացվում են ուսուցիչների մասնագիտական և մեթոդական վերապատրաստման դասընթացներ: Մեր պատկերացումների համակարգ են ներխուժում հանդուրժողականություն, թիմային աշխատանք, շարժունակություն, մտահասություն, էկոլոգիական գիտակցություն, ինքնուրույնություն, կրթության սուբյեկտ, համագործակցային ուսուցում և բազում այլ հասկացություններ: Ընթանում է վերակառուցման մի պրոցես, որը ոչ միայն մեր կրթական կառույցներին է վերաբերում, այլ նաև մեր մտածողությանը:

Համաշխարհային կրթական զարգացումներում նկատվում են հանրակրթության բովանդակության ձևավորման և ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման նոր մոտեցումներ: Փորձենք ներկայացնել դրանք ընդհանուր գծերով:

ԳԼՈՒԽ 1

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Սովորողների ուսուցման արդյունքների ստուգումն ուսուցման գործընթացի բաղադրամասերից է: Դա սովորողների ձեռք բերած գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ստուգումն ու գնահատումն է: Ստուգումն իրականացվում է ուսուցման գործընթացի բոլոր աստիճաններում:

Սովորողների ՝ տվյալ ուսումնական առարկայից, ըստ ուսումնական ծրագրերի յուրացրած գիտելիքները, կարողություններն ու հնմտությունները պետք է համապատասխանեն կրթական ստանդարտին:

Ուսուցման արդյունքների ստուգումը դիտվում է որպես մանկավարժական ախտորոշում (դիագնոստիկա)[1] , այսինքն՝ թե սովորողներն այս կամ այն առարկայից, նրա բաժիններից, ըստ ուսումնական ծրագրերի, որքան գիտելիքներ , կարողություններ ու հմտություններ են յուրացրել:

Այսպիսի վերահսկողությունն ունի կրթական, դաստիարակչական և զարգացնող գործառնություններ:

Դիդակտիկայում ընդունված է երեք տեսակ վերահսկողություն՝ ընթացիկ, պարբերական, տարբական:

Ընթացիկ վերահսկողությունը յուրաքանչյուր դասի ընթացքում սովորողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ստուգումն ու գնահատումն է; Ընթացիկ վերահսկողությունն ավելի օպերատիվ է, ավելի ճկուն, քան վերահսկողության մյուս տեսակները:

Պարբերական վերահսկողությունն իրականացվում է ուսումնասիրված ծավալուն

Ամիրջանյան Ա., Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, Երևան , 2005,էջ 264,

թեմաներից: Այս դեպքում հաշվի են առնվում ընթացիկ վերահսկողության արդյունքները:

Ընդհանրացնող կամ հանրագումարային վերահսկողությունը կատարվում է սովորողների հաջորդ դասարան փոխադրվելու նախօրեին: Նրա գլխավոր նպատակը ուսումը շարունակելու համար անհրաժեշտ պատրաստվածության նվազագույնի պարզելն է: Վերահսկողության գործառնության միջոցով բացահայտվում է սովորողների գիտելիքների մակարդակը ուսուցման բոլոր փուլերում:

Դպրոցականների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումն անցկացվում է ըստ ուսումնական առարկաների և ուսումնական ծրագրերի, որը շատ կարևոր դիդակտիկական խնդիր է: Արտասահմանյան շատ երկրների դպրոցներում սովորողների իմացության ստուգումը կատարվում է այսպես.

Աշակերտը գիտի որքան գիտի, հասկանում , ընդունում, վերլուծում, ընդհանրացնում , գնահատում է և այլն[1] : Ահա աշակերտի այդ գործողություններները կամ որակները ենթական են ստուգման: Այդպես են ստուգվում սովորողների նաև մտապահումը, հիշողությունը, վերարտադրությունը ՝ պատմելը, բացատրությունը, նրա կողմից կատարվող ուսումնական գործողությունները և այլն:

Առանձին գիտնականներ գտնում են, որ սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգմանը զուգընթաց պետք է ստուգել նրանց խոսքի կուլտուրան, մտածողությունը, հիշողությունը , զարգացածությունը երևակայությունը, ուշադրությունը և այն, թե նրանք որքանով կարող են իրենց ձեռք բերած գիտելիքները կիրառել նոր իրավիճակներում, լուծել ուսումնական պրոբլեմներ, ինքնուրույնաբար կատարել գործնական աշխատանքներ և այլն: Այլ կերպ ասած, խնդիր է դրվում բարեփոխել վերահսկողության բովանդակությունը: Չի բացառվում, որ վերահսկողության բովանդակությունը ներառի սոցիալական

---

[1]Handbook on formative and summative evaluation of student learning by Blum, Hastings, Madaus, 1971 McGraw-Hili, inc.

այնպիսի որակների ստուգում, ինչպիսիք են՝ սովորողների պարտքի ու պատասխանատվության զգացումը, վարքի բարոյական նորմերը, նրանց կողմից մոտիվների ձևավորումը և այլն: Այսինքն՝ հայտնաբերել սովորողների՝ ուսոցման, կրթության միջոցով դաստիարակության մեջ ունեցած ձեռքբերումները: Սակայն շատ դժվար է սովորողների մեջ հայտնաբերել սոցիալական-հոգեբանական նման որակներ:

ԳԼՈՒԽ 2

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Վերահսկողության մեթոդը ուսուցչի և աշակերտների փոխկապակցված և հաջորդաբար փոփոխվող փոխազդեցություններն են , որոնք ապահովում են ուսուցման գործընթացի հետադարձ կապը:

Ժամանակակից դիդակտիկայում ընդունված են վերահսկողության հետևյալ մեթոդները.

Դիտման,

Բանավոր վերահսկողություն,

Գրավոր վերահսկողություն

Գործնական վերահսկողության մեթոդներ,

Դիդակտիկական տեքստերի կիրառման:

Դիտումն ուսուցիչն հիմնականում կիրառում է ընթացիկ վերահսկողության ընթացքում : Նա սիստեմատիկաբար , գրեթե ամեն օր , հետևում է դասարանական կոլեկտիվի ուսումնական գործունեությանն ընդհանրապես և յուրաքանչյուր աշակերտի ուսումնական գործունեությանը ՝ մասնավորապես: Գաղափար է կազմում նրանց գործելակերպի , ինքնուրույն աշխատանքների, ցուցաբերած ու գործադրված գիտելիքների, կարողությունների ու հմտությունների, գիտակցական կարգապահության , վարքի, պարտքի ու պատասխանատվության զգացման և բարոյական այլ որակների մասին: Դիտման միջոցով ուսուցիչն աշակերտների բնույթի մեջ հայտնաբերում է տարբեր գծեր, հատկանիշներ: Եվ , իհարկե, ուսուցիչն իր գործունեության ընթացքում նկատի է ունենում այդ բոլորը:

Բանավոր վերահսկողության մեթոդների շարքին են դասվում զրույցը, պատմելը, բացատրությունը, տեքստի ընթերցանությունը, հաղորդումը և այլն: Այդ մեթոդների միջոցով աշակերտն իրականացնում է իր մենախոսական պատասխանը: Բանավոր հարցման մեթոդ է հարց ու պատասխանը. ուսուցիչն առաջադրում է հարցը, իսկ հարցին պատասխանում է աշակերտը: Սա նշանակում է , որ այն որպես բանավոր մեթոդ կիրառվում է զրույցի ձևով:

Ստուգարքը և քննությունը , ստուգողական աշխատանքը նույնպես վերահսկողության բանավոր և գրավոր մեթոդներ են: Սրանք բացահայտում են սովորողների գիտելիքների մակարդակը , չափը , ծավալը, խորությունը:

Ստուգարքն անցկացվում է ուսումնական կիսամյակի վերջում կամ որևէ ծավալուն թեմայի ուսումնասիրությունից հետո : Այն կարելի է անցկացնել ուստարվա վերջում, հատկապես այն առարկաներից, որոնք քննական չեն: Ստուգարքի քննությունն այն է, որ չի տալիս ամբողջական պատկերացում սովորողների յուրացրած և չյուրացրած գիտելիքների մասին:

Սակայն քննությունն էլ ունի իր թերությունները: Դրանք հատկապես բացահայտվում են քննարկն հարցատոմսերում չէ որ լինում են հաջող և անհաջող կազմված հարցատոմսեր, լարվածություն առաջացնող հարցեր և այլն: Ներկայումս աշխարհի շատ երկրներում , բացի քննությունից, կիրառում են գիտելիքների ստուգման այլ ձևեր: Այսպես , օրինակ , սովորողներն ուսուցչի հանձնարարությամբ որևէ կարևոր թեմայից գրում են ռեֆերատներ և պաշտպանում են դրանք , ինչպես դիպլոմային աշխատանք: Կամ աշակերտն առանց քննական տոմս վերցնելու , իր ցանկությամբ , քննվում է տվյալ ուստարում ուսումնասիրված դասընթացից: Այս դեպքում ուսուցիչն աշակերտին անցած թեմաներից առաջադրում է հարցեր և ստանում պատասխաններ: Թեև առանձին գիտնականները քննադատում են քննության այս ձևը , սակայն մենք այն համոզմանն ենք, որ քննության այդ ձևի դեպքում միայն կարելի է բացահայտել յուրաքանչյուր սովորողի գիտելիքների ծավալը, չափը, խորությունը, մակարդակը՝ տվյալ ուսումնական առարկայից: Մեր համոզմամբ հարցատոմսերով քննությունը սահմանափակում է նշանակում:

Գրավոր վերահսկողության մեթոդներից են գրավոր աշխատանքները, թելադրությունը, փոխադրությունը, շարադրությունը, ուսումնական բոլոր առարկաներից ուսուցչի կողմից աշակերտներին առաջադրված գրավոր աշխատանքները:

Գրավոր աշխատանքները բացահայտում են սովորողներիէ յուրացրած գիտելիքների չափը, աստիճանը , խորությունը: Գրավոր աշխատանքների, կարողությունների ու հմտությունների փոխկապակցվածությունը, միջառարկայական կապերից օգտվելու ընդունակությունները: Գրավոր աշխատանքների ստուգումից ուսուցիչը գաղափար է կազմում սովորողների խոսքի կուլտուրայի , տրամաբանական, ուսումնական նյութը սեղմ, լակոնիկ շարադրելու, լեզվի հարստությունից օգտվելու կարողությունների մասին: Կարելի է ասել գրավոր աշխատանքում երևում է աշակերտի մտածողությունը, խելքը, բանականությունը , ինքնիկրթությունը, ինքնուսուցմասն աստիճանը:

Գործնական վերահսկողության մեթոդի հիմնական էությունը աշակերտների ուժերով զանազան գործիքների , իրերի, առարկաների, պարզունակսարքերի պատրաստումնէ: Նրանց լողմից կայացված լաբորատոր և ուսումնական կաբինետներում, արհեստանոցներում , ֆիզկուլտ դահլիճում , աշխարհագրական հրապարակում , ուսումնափորձնական հողամասում, տեխնոլոգիա առարկայից կատարած գործնական աշխատանքներն են:

Դիդակտիկական տեստեր. տեստ բառն անգլերեն է, նշանակում է՝ փորձարկում , հետազոտում: Այն առաջին անգամ կիրառվել է Անգլիայում՝ 19-րդ դարի վերջերին:

Տեստը հանձնարարությունների կամ առաջադրանքների հավաքածու է, սովորողների կողմից որևէ ուսումնական նյութից ստացած գիտելիքների յուրացման աստիճանը որոշելու համար:

20-րդ դարի սկզբներին տեստերի կիրառությունը լայն տարածում է ստացել անգլիալեզու երկրներում: Տեստին ներկայացվում են մի շարք պահանջներ: Տեստը պետք է պահպանի իր հասանելիությունը: Նշանակում է, նույն պայմաններում պետք է ցույց տա համապատասխան արդյունքներ:Տեստը հայտնաբերում է այն գիտելիքների յուրացումը , որ ուզում է չափել տեստը մշակողը: Տեստին պատասխանելու համար պետք է ունենալ գիտելիքներ և ժամանակ:

Տեստի առավելությունը նրա օբյեկտիվությունն է:Արտասահմանյան երկրներում տեստերը մշակում են հատուկ մասնագետներ: Այդ երկրներում ուսուցիչները ստանում են պատրաստի տեստեր, այնպիսիք, որպիսիք ներկայումս կիրառվում են ԱՄՆ-ում, Անգլիայում, Կանադայում:

Շատ երկրների դպրոցներում տեստեր չեն կիրառվում, գտնելով, որ դրանք խոչընդոտում են սովորողների շարունակաբար զարգացումը: Դպրոցական պրակտիկայում կարելի է կիրառել այն տեստերը, որոնց միջոցով ստուգվում են սովորողների յուրացրած գիտելիքները:

ԳԼՈՒԽ 2.1

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԻՑ

Մեթոդը, բառացի նշանակում է «որևէ բանի հասցնող ուղի, լայն իմաստով՝ նպատակին հասնելու եղանակ, որոշակի ձևով կարգավորված գործունեություն:

Մեթոդը իրականության ճանաչման անհրաժեշտ միջոց և գործիք է, այն որոշակի սկզբունքներով, կանոններով ու հնարներով իրականացվող գործունեություն է, որ կոչված է ապահովելու տրված նպատակը տանող կարճագույն ուղի:

Մեթոդները ստեղծվում են այս կամ այն տեսության շրջանակներում և կոչված են ծառայելու վերջինիս: Յուրաքանչյուր տեսություն ստեղծում է իր մեթոդները և նրանց օգնությամբ լուծում տարազան հետազոտական կամ պրակտիկ խնդիրներ: Ուրեմն, մեթոդները գործիքներ են, որոնց օգնությամբ տեսությունն իրականացնում է իր իմացական կամ գործնական նպատակները: Այլ խոսքով, մեթոդը տեսության գործունակության, նրա ակտիվության դրսևորման միջոց է: Առանց մեթոդի տեսություն չկա, կարելի է ասել, որ մեթոդը միշտ թաքնված ձևով առկա է տեսության մեջ. դա գործունեության այն եղանակն է, որը ածանցվում կամ արտածվում է տեսության հիմնարար սկզբունքներից ու օրենքներից:

Կարևոր է ընդգծել նաև մեթոդի ու տեսության տարբերիչ առանձնահատկությունները: Տեսությունները երկու հիմնարար գործառույթ ունեն. բացատրել առկա փաստերը և կանխատեսել նոր փաստեր: Մեթոդը նման գործառույթներ չունի, այն ընդամենը տեսության կամ պրակտիկ գործունեության կարգավորիչ է, իրականության ճանաչման կամ նրա վերափոխման ռազմավարություն:

Ուսուցման մեթոդը ուսուցչի, աշակերտի իմացական և պրակտիկ գործունեությունը կազմակերպող, հաջորդական գործողությունների համակարգ է, որը հանգեցնում է կրթության բովանդակության յուրացմանը, ասել է թե՝ ուսուցման նպատակների իրականացմանը:

Ուսուցման մեթոդն իր գործառության մեջ ենթադրում է որոշակի ուսումնական նպատակի և վերջինս իրականացնելու համար անհրաժեշտ գործողությունների ու համապատասխան միջոցների առկայություն : Այլ խոսքով

Ուսուցման մեթոդը, ուսուցման նպատակների իրականացմանն ուղղված մանկավարժի և սովորողների փոխկապակցված ու փոխպայմանավորված գործունեության եղանակ է կամ այլ կերպ՝

ուսումնական խնդիրների լուծմանը միտված, սովորողների իմացական և պրակտիկ գործունեությունը կազմակերպող մանկավարժի նպատակաուղղված գործողությունների համակարգ:

դասը և ուսուցման կազմակերպական բոլոր ձևերը ուսուցման ամբողջական գործընթացում երկրորդական նշանակություն ունեն, վերաբերում են ուսուցման արտաքին կողմին, չեն առնչվում նրա ներքին էությանը: Այս համարյա համընդհանուր ճանաչում գտած տեսակետը հիմնված է մի մոտեցման վրա, ըստ որի՝ ուսուցումն իր էությամբ իմացական գործունեություն է: Մեթոդն է, որ կազմակերպում, կարգավորում է այդ գործունեությունը: Նրա կիրառումը ուղղակի, կոշտ կախում չունի աշակերտների թվից, դասագրքերի առկայությունից կամ նրանց որակից, ուսումնական միջավայրի առանձնահատկություններից՝ այն ամենից, ինչից ուղղակիորեն կախյալ է ուսուցման կազմակերպական ձևը: Մեթոդը հաշվի է առնում մարդու հոգեկան կառուցվածքը, հոգեկանում ընթացող իմացական պրոցեսների առանձնահատկությունները, ճանաչողության հոգեբանական մեխանիզմները: Մեթոդն ստեղծվում է այս ամենի գիտական իմացության հենքի վրա: Ուսուցման կազմակերպական ձևը, ենթադրվում է, որ այս ամենի հետ առնչություն չունի, կամ առնվազն, որոշիչ չէ այդ առնչությունը: Այն հիմնականում կոնկրետ իրադրական խնդիրներ լուծելու գործառույթ ունի. ինչպես միավորել սովորողներին մեկ ընդհանուր ուսումնական գործընթացի մեջ, ինչպես կազմակերպել նրանց և ուսուցչի միջև փոխհարաբերությունները, տվյալ պայմաններում ուսուցման այս կամ այն մեթոդը լավագույնս իրականացնելու համար և այլն:

Դիտում

Դիտման մեթոդի դեպքում սովորողները կարճ կամ համեմատաբար երկար ժամանակի ընթացքում ինքնուրույն դիտում են այս կամ այն օբյեկտը կամ երևույթը : Մանկավարժը ցուցումներ է տալիս դիտման պրոցեսի կազմակերպման վերաբերյալ, օգնում է ամփոփել դիտումների արդյունքները ու եզրակացություններ անել : Մենք այս մեթոդը հաճախակի կիրառելու արդյունքում բացահայտել ենք, որ այն հիանալի տարբերակ է սովորողների բանավոր խոսքի զարգացման, ինչպես նաև հիանալիորեն զարգացնում է քննադատակ մտածողությունը: Աշակերտը հետությամբ կկարողանա բարձր դասարաններում մասնակցել բանվոր քննություններին, իսկ քայլե պետք է ձեռնարկել արդեն տարրական դասարաններում:

Մենք ցույց տվեցինք մեր աշակերտներին պաստառ, որն առնչվում է այդ օրվա մեր դասին և հարց ու պատասխանի միջոցով կարողացանք քննարկում ծավալել:Դիտման հետ բանմիջական կապ ունի Իլյուստրացիան:

Իլյուստրացիան ենթադրում է առարկաների ու երևույթների ցուցադրում սիմվոլային պատկերմամբ : Իլյուստրացիայի միջոցներն են պլակատները, քարտեզները, լուսանկարները, սխեմաները, ալբոմները և այլն :

Ժամանակակից աշակերտին անհրաժեշտ են ոչ միայն տեսական գիտելիքներ տարբեր առարկաներից, այլ նաև այդ գիտելիքները աշխատանքային և հոգևոր գործունեության տարբեր ոլորտներում կիրառելու պրակտիկ կարողություններ ու հմտություններ:

Վարժություններ

Վարժությունների մեթոդի դեպքում սովորողները բազմիցս կատարում են միևնույն գործողությունները, այսինքն վարժվում են յուրացված տեսական նյութը պրակտիկայում կիրառելու մեջ, դրանով իսկ խորացնելով իրենց գիտելիքները, ձեռք բերելով համապատասխան կարողություններ ու հմտություններ, ինչպես նաև զարգացնելով իրենց մտածողությունն ու ստեղծագործական ընդունակությունները:

Կարող են լինել բանավոր կամ գրավոր վարժություններ, պրակտիկ առաջադրանքներ բնագիտական առարկաներից, ստեղծագործական աշխատանքներ լեզվից ու գրականությունից և այլն:

Գործնական աշխատանքներ

Գործնական աշխատանքների մեթոդի հիմնական ֆունկցիան ձեռք բերած գիտելիքների կիրառումն է գործնական խնդիրների լուծման ընթացքում: Այն նաև լուծում է սովորողների գիտելիքների խորացման ու ամրապնդման խնդիրը:

Աշակերտների կողմից գործնական աշխատանքների անմիջական կատարմանը նախորդում է ուսուցչի բացատրությունը, որը նպատակ ունի տեսականորեն իմաստավորել աշխատանքը և գործողությունների շարքի ցուցադրումը: Դրանից հետո աշակերտները կատարում են աշխատանքը, իսկ ուսուցիչը վերահսկում է նրանց գործողությունները:

Տարրական դասարաններում կարևոր են խաղերը, որոնք մենք լայնորեն կիրառում ենք:

Որպես ուսուցման մեթոդ խաղը իրականության մոդելավորման մի ձև է, հատուկ կազմակերպված իրադրություն, որից սովորողներին առաջարկվում է ելք գտնել:

Խաղի մեթոդի հիմնական ֆունկցիան սովորողի ճանաչողական գործունեությունը իրականությանը մոտեցնելն է : Այս խաղերը լայնորեն կիրառվում են հատկապես օտար լեզուների և գրականության դասավանդման, ինչպես նաև համակարգչային ուսուցման պրոցեսում:

Բավական է հիշել Կոլոցցայի խոսքը. Հնարավոր չէ կատարել ավելի վատ բան, քան խաղին տալ միայն ուսուցողական նշանակություն: Նրա առաջին խնդիրը սովորեցնելը չէ, այլ երեխայի զարգացմանը նպաստելը: Ի վերջո, մեր գլխավոր նպատակն է զարգացնել երեխային և գինել համապատասխան , անհրաժեշտ գիտելիքներով:

Հետազոտության ընթացքում համոզվեցինք, որ դպրոցում դասավանդվող բոլոր առարկաներն իրենց ուրույն տեղն ունեն սովորողների իմացական կարողությունների զարգացման գործում, բայց խաղը մնում է անփոխարինելի:

Այժմ անդրադառնանք այն խաղերին, որոնց միջոցով մենք փորձել ենք զարգացնել կրտսեր դպրոցականների իմացական կարողությունները, ստուգել մեր տված գիտելիքների յուրացման աստիճանը և նախապատրաստել նրանց թեմատիկ, ինքնուրույն աշխատանքներին::

Հատապտուղ ենք հավաքում

Խաղի նպատակները. խաղն , ըստ էության շարժուն է, սակայն կարելի է նաև լուծել ուսումնական խնդիրներ:

Օրինակ՝ խոսել ծառերի և թփերի, մրգերի և հատապտուղների տարբերությունների, ինչպես նաև նրանց օգտակար կատեգորիաների մասին: Զարգացնել երեխաների աչքաչափը, իմացական մակարդակը:

Խաղի ընթացքը: Խաղն իրականացվում է նույն եղանակով. միայն նկատի պետք է ունենալ, որ հատապտուղ հավաքելու համար շատ կռանալ և բարձրանալ պետք չէ: Հարկավոր է պարզապես պատկերացնել թուփը, պտտվել թփի շուրջը և ձգտել կամ իջնել թփի բարձրության սահմաններում:

Ուսուցիչ- երեխաներ, մենք գտնվում ենք անտառի բացատում, այստեղ հասունացել են տարբեր հատապտուղներ՝ մոշ, հաղարջ, մորի.. եկե՛ք հավաքենք դրանք և լցնենք զամբյուղը: Բայց միայն այն հատապտուղն ենք քաղում, որի մասին դուք կլսեք տեղեկություն :

Ավարտիր բառերը

Խաղի նպատակները. երեխաներին նախապատրաստել վանկի մասին նոր գիտելիքների ձեռքբերմանը, սովորեցնել բառը վանկատել:

Անհրաժեշտ պարագաներ. բազմավանկ անուններ ունեցող առարկայական նկարներ և խաղալիքներ:

Խաղի ընթացքը: Ուսուցիչ- ես հիմա կասեմ ձեզ ծանոթ անունների առաջին վանկը, դուք պետք է ավարտեք բառը՝ ավելացնելով մեկ վանկ: Ուսուցիչը արտասանում է թա վանկը, երեխաներն ավելացնում են վանկեր՝ ստանալով Թամար, Թաթուլ, Թալին, Թաթիկ և այլ բառեր: Այս խաղը կարելի է կազմակերպել նաև այլ բառերի շուրջ: Մենք կազմակերպել ենք տարբեր բնագավառների շուրջ:

Նույնը կարելի է կազմակերպել բազմավանկ բառերի շուրջ՝ օգտագործելով առարկայական նկարներ, խաղալիքներ, առարկաներ:

Որոշիր գծապատկերը

Խաղի նպատակները. զարգացնել երեխաների տեսողական ընկալումը, հնչյունային լսողությունը, սովորեցնել տարբերել ձայնավորներն ու բաղաձայնները:

Անհրաժեշտ պարագաներ. տարբեր բառերի գծապատկերներ, դրանց համապատասխան առարկաները կամ նկարները:

Խաղի ընթացքը. Դասարանը բաժանվում է խմբերի: Յուրաքանչյուր խմբի առջև դրվում են տարբեր առարկաների անվանումների գծապատկերները:

Առաջադրանք. ուսուցիչը ցույց է տալիս տարբեր առարկաներ կամ դրանց նկարները և տալիս հանձնարարություն.

- Ուշադիր դիտեք ձեր սեղանների վրա դրված գծապատկերները և այս նկարը (կամ առարկան): Ո՞ր խմբի մոտ է այս առարկայի գծապատկերը:

Հրաշալի պարկ

Խաղի նպատակները. զարգացնել երեխաների հնչյունային լսողությունը, ամրակայել բառի մասին երեխաների ունեցած գիտելիքները ու կարողությունները: Ձևավորել տրամաբանված խոսք կառուցելու, նախ մտածելու, ապա խոսելու կարողությունները: Ամրակայել ձայնավորների և բաղաձայնների մասին երեխաների գիտելիքներն ու կարողությունները:

Անհրաժեշտ պարագաներ. փոքրիկ պարկ՝ հեքիաթային պայծառ նկարներով: Պարկի մեջ լցնել զանազան իրեր, խաղալիքներ. շուն, կոճ, մատիտ, նուշ, ռետին և այլն:

Խաղի ընթացքը. Երեխաները մեկ-մեկ մոտենում են, վերցնում են պարկը, ձեռքը մտցնում մեջը, բռնում պարկի իրերից որևէ մեկը և այն նկարագրում, ապա ասում, թե քանի վանկ, հնչյուն ունի տվյալ իրի անվանումը: Դասարանը բառի հնչյունային և վանկային կառուցվածքով որոշում է, թե ինչ առարկա է պարկի մեջ շոշափում իրենց դասընկերը:

Խոսքի նմուշ համար սկսում է ուսուցիչը.

- Ես մատներով շոշափում եմ մի առարկա, որն ուտում են: Այն կոշտ է, ծայրերըսուր են, համեղ է, ունենում է կեղև, բայց պարկի մեջ է առանց կեղևի: Այդ ուտելիքի անունը միավանկ է, ունի 3 հնչյուն:

Երեխաները մտածում են, որոշում , թե ինչ առարկայի մասին է խոսքը: Ուսուցիչը ցույց է տալիս իր հանած առարկան՝ նուշը: Երեծաները հաշվում են նուշ բառի հնչյունների քանակը , գծում բառի գծապատկերը: Որոշում են հնչյունների տեղը բառի մեջ:

Ուսուցիչը խնդրում է դասարանին խմբով արտասանել այն հնչյունը, որը լսում են բառասկզբում: Երեխաները երկար արտասանելուց հետո «հայտնաբերում են», որ ն հնչյունը երկար արտասանելուց հետո «կորչում է», լսբում է ը: Նույն ձևով նրանք նկատում են, որ այդպես է լսվում նաև շ հնչյունը:

Ուսուցիչ- Իսկ հիմա եկեք արտասանենք այն հնչյունը, որը լսվում է բառամիջում: «ու՛...» ,- երկար արտասանում են երեխաները և աշխուժորեն նկատում, որ ու հնչյունը մինչև վերջ լսվում է: Այսպիսի աշխատանք է կատարվում մի քանի միավանկ բառերի շուրջ՝ խորացնելով բացատրությունը:

Ո՞րն է ճիշտ

Խաղի նպատակները. երեխաների բառապաշարը հարստացնել հրաշալի բառերով և արտահայտություններով, դաստիարակել քաղաքավարի հաղորդակցվելու ունակություն, զարգացնել քննադատական միտքը:

Անհրաժեշտ պարագաներ. խաղում նկարագրված թեմաներով առանձին նկարներ և դրանց համապատասխան հրաշալի բառեր:

Խաղի ընթացքը. Դասարանը 1-4 հաշվով բաժանում ենք 4 խմբի: Յուրաքանչյուր խմբին տալիս ենք նմարներ և դրանց համապատասխան բառեր(նկարներում պետք է ներկայացվեն ինչպես բարեկիրթ, այնպես էլ ոչ բարեկիրթ վարվելաձևերը, իսկ առանձին թղթերի վրա լինեն «խնդրում եմ»,«ներողություն»,«շատ բարի»,«թո՛ղ»,«չե՛մ տա»«տո՛ւր»«տո՛ւր , խնդրո՛ւմ եմ» և այլ բառեր ու արտահայտություններ, որոնք համապատասխանում են նկարների բովանդակությանը): Երեխաները խմբով ընտրում և կողք կողքի են դնում բառերին համապատասխանող նկարները, բառերն ու արտահայտությունները: Ապա խումբը կորոշի, թե որ արտահայտություններն են բարեկիրթ, որոնք են անբարեկիրթ, և խումբը կընտրի մեկին ով ինքնատորեն կներկայացնի խմբի կարծիքը:

Ո՞վ է նա : Ի՞նչ է նրան պետք

Ո՞վ է նա, ի՞նչ է անում

Դետեկտիվ,

Մենք հարցնում ենք, դուք պատասխանում եք.

այս և նմանատիպ բազմաթիվ խաղերը նպաստում են սովորողների ինքնատեսական մտածողության ձևավորմանն ու զարգացմանը , ապահովում նրանց մասնակցությունը դասի, զարգացնում են սովորողների իմացական կարողությունները

ԳԼՈՒԽ 3

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Գնահատականին ավելի լայն իմաստ հաղորդելով և սովորողների գիտակցության մեջ մտցնելով այդ հոսի մտայնությունը, թե ցածր գնահատականը մարդու ոչ թե տվյալ առարկայի հանդեպ հետաքրքրություն չդրսևորելու արտահայտությունը կամ փաստի արձանագրումն է, այլ նրա տգետ, վատ, ծույլ լինելու վկայությունը, ուսուցիչները պարտադրում են սովորողին իր ինտելեկտուալ ուժերն սպառել, ցրելով դրանք բոլոր առարկաների վրա: Իր հերթին գնահատականն այլևս չի ծառայում ուսումնական նպատակներին. շահարկելով 'օբյեկտիվության' պահանջը :

Առաջադիմության միավորային գնահատման պայմաններում, երբ ուշադրության է արժանանում գլխավորապես սովորողի փաստական առաջադիմությունը, աշակերտի մեջ պետք է ձևավորվեն ինքնագնահատման պահանջ ու կարողություններ: Միջոցներ չունենալով սեփական անձը գնահա-տելու՝ նրա ինքնագնահատականը կախյալ է դառնում շրջապատի կարծիքից: Արդյունքում դժվարանում է այնպիսի կարևոր անձնային որակների ձևավորումը, ինչպիսին ինքնուրույնությունն ու անկախ մտածելակերպն է: Բացի այդ, ընդունակությունների մի ստվար բաժին՝ մտածողության յուրակերպությունը, ուսումնառության մոտիվները, ուսումնական գործունեության առանձնահատկությունները մնում են չբացահայտված:

Գնահատման համակարգի զարգացման ժամանակակից փուլում նկատելի է ուսուցչի գնահատումից սովորողի մասնակցությամբ գնահատմանն անցման միտումը, ինչպես նաև՝ գնահատման անորոշ և աշակերտից թաքուն պահվող չափանիշներից անցում գնահատման բացահայտ չափանիշների: Այս պրոցեսները նպատակ ունեն ուսումնական գործունեությանն ուղեկցող մրցակցային վնասաբեր հարաբերությունները փոխարինել համագործակցային հարաբերություններով: Գաղտնիք չէ նաև, որ առկա համակարգում առավելապես գնահատվում են սովորողների գիտելիքները ու հիշողությունը: Մինչ համաշխարհային կրթական զարգացումները մատնանշում են այլ ճանապարհ. գնահատել ավելի համալիր որակներ՝ առարկայական ու վերառարկայական մտահասություններ, իսկ հիշողության փոխարեն արժևորել հասկացման, երևույթների մեկնաբանման, վերլուծման ու համադրման կարողությունները:

Հիշյալ հիմնախնդիրների և կրթության զարգացման ընդհանուր միտումների լույսի տակ առանձին կարևորություն է ստանում այսպես կոչված ուսուցանող կամ ձևավորող գնահատումը (formative assaesment):

Ուսուցանող գնահատումն իր բնույթով ընթացիկ գնահատում է: Նրա նպատակը ոչ թե սովորողի փաստական գիտելիքներն ստուգելն ու գնահատելն է, այլ ուսուցման գործընթացը մշտապես ուշադրության կենտրոնում պահելը. պարբերաբար բացահայտել սովորողների դժվարություններն ու ուսումնական չօգտագործված հնարավորությունները և համապատասխան բարեփոխումներով հասնել հնարավոր լավագույն արդյունքին: Այլ խոսքով՝ ուսուցանող գնահատումը ուսուցման ու դաստիարակության արդյունքների որակի և սովորողների զարգացման դինամիկայի մասին տեղեկությունների հավաքում ու մշակում է և վերջինիս հիմքի վրա ուսուցման գործընթացի շարունակական բարելավում: Ուսուցիչը պետք է հոգեբանորեն հարմարվի այն գաղափարին, որ աշակերտն ազատ է սովորելու այն առարկաները, որոնց հանդեպ հետաքրքրություն ու հակում ունի: Խոսքն իհարկե չափորոշիչով սահմանված նվազագույն գիտելիքներին ու կարողություններին չի վերաբերվում. դրանք ենթակա են պարտադիր յուրացման: Ուսուցչի գնահատականը պիտի գերազանցապես ծառայի սովորողի խրախուսանքին ու ոգևորությանը և նվազագույն չափով նրանց համեմատությանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ստուգողական աշխատանքների , ստուգարքների և քննությունների նախապատրաստման , անցկացման և վերլուծության պրոցեսը կարևոր է սովորողների ուսուցման պրոցեսի վերահսկողության համար:
- Ստուգողական աշխատանքների , ստուգարքների և քննությունների նախապատրաստումը պետք է ունենա պարբերական բնույթ, սակայն լինի քողարկված

- Մարդն առհասարակ, երեխաները՝ առավել ևս, հակված են ամեն ինչի մեջ իմաստ տեսնելու: Այն գիտելիքներն են անցնում երկարատև հիշողության ոլորտ, որոնք մարդը գիտակցաբար ցանկացել է յուրացնել:
- Կրտսեր սպրոցականների իմացական կարողությունների զարգացումը սերտորեն կապված է դասավանդվող առարկայից, մատուցվող նյութից, ուսուցչի անձից,նրա մանկավարժական առարկայից, մատուցվող նյութից, ուսուցչի անձից, նրա մանկավարժական տակտիկայից, գիտելիքներից, կարողություններից և հմտություններից, ճիշտ ընտրվածմեթոդներից, ուսուցման ձևից:
- Ուսուցիչը պետք է հոգեբանորեն հարմարվի այն գաղափարին, որ աշակերտն ազատ է սովորելու այն առարկաները, որոնց հանդեպ հետաքրքրություն ու հակում ունի: Խոսքն իհարկե չափորոշիչով սահմանված նվազագույն գիտելիքներին ու կարողություններին չի վերաբերվում. դրանք ենթակա են պարտադիր յուրացման:
- Ուսուցչի գնահատականը պիտի գերազանցապես ծառայի սովորողի խրախուսանքին ու ոգևորությանը և նվազագույն չափով նրանց համեմատությանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ամիրջանյան Ա., Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, Երևան , 2005,

Հանրակրթության պետական կրթակարգ, Ե., Անտարես, 2004,

ՀՀ պաշտոնական տեղեկագիր, Կրթության մասին Հայաստանի Հանրապետության օրենքը, 1999, կետ 18:

Handbook on formative and summative evaluation of student learning by Blum, Hastings, Madaus, 1971 McGraw-Hili, inc.

Armedu.am